Սեպտ. 15–ի առաւօտեան, Ազգ. Խորհրդի անդամները, ինքնապաշտպանութեան կազմակերպիչներն ու ղեկավարները, գինուորներն ու բնակչութեան մի մասը, նաւերով, հեռացան Բաքուից՝ ոմանք դէպի Պարսկաստան, ոմանք դէպի Պետրովսկ, ոմանք Կրասնովոդսկի կողմը: Վերջին նաւ նստողն էր Բաքուի հերոսամարտի ոգին՝ Ռոստոմը՝ մռայլ, ընկճած ու յուսաբեկ...

Իսկ քաղաքում, այդ միջոցին, սկսւում էր Մեծ եղեռնը: Մահմետականն խուժանը թափւում էր ամէն կողմից: Հասան Ադրբէջանի կառավարութեան ներկայացուցիչներն էլ: Եւ երեք օր չարունակ, ամէն կողմ, կատարւեց սպանութիւն, թալան, բռնաբարութիւն և աննկարագրելի դաժանութիւն. Ինվէրի ու Թալէաթի աշակերտները սերտում էին իրենց վարպետների տւած դասը...

Թիւրք կանոնաւոր զօրքը քաղաք մտաւ միայն սեպտ.16–ի երեկոյեան, և այդ ժամից դանդաժային թալանն ու կոտորածը վերջ գտաւ: Անհատական սպանութիւնները, սակայն, ձերբակալութիւններն ու կողոպուտը, այնուհետև էլ չարունակւեցին. հայերը Ադրբէջանում դրւեցին օրէնքից դուրս:

Որքա՞ն էր Բաքուի զոհերի գումարը: Ազգ. Խորհրդի նախագահ Ա. Գիւլխանդանեանը այդ մասին տալիս է հետևեալ թւերը. սպանւածներ՝ 5,248 հոգի, անյայտացածներ՝ 3,572, գերւածներ՝ 3,396, բանտարկւածներ՝ 253, առևանգւածներ՝ 571, բռնաբարւածներ՝ 288:

Բ. Իշխանեանը իր կատարած վիճակագրութեան վրա յենւելով՝ հաղորդում է ուրիշ թւեր.*) սպանւածներ՝ 9,029, անյայտացածներ՝ 3,586, գերւածներ՝ 4,246, բանտարկւածներ՝ 253, առևանգւածներ՝ 1,142, բռնաբարւածներ՝ 572: Բացի այդ, Իշխանեանը հաստատում է, որ Բաքուի 32,000 վախճանականներից 10,235 հոգին մեռել է դանազան վայրերում: Եղել են և այլ կարգի մահացութիւններ: Զոհերի համագումարը Իշխանեանը ցոյց է տալիս 29,060, Բաքուի 89,541 հոգի հայ բնակչութեան 32,45%: Հայերի նիւթական կորուստը Իշխանեանը հաշւում է 945,724,017 րուբլի:

«29,060 հոգի մարդկային զոհեր և 945,724,017 կամ մօտ մի միլիարդ րուբլու նիւթական վնասներ ու կորուստներ — ահա թիւրք–թաթարական բարբարոսութեան և արիւնռուշտ բաղաքականութեան արդիւնքը սեպտեմբերեան մեծ սարսափների օրերին» — եզրափակում է Բ. Իշխանեանը:

Ահա ա՛յս «քաղաքական հասունութեան վկայականով» Ադրբէջանը սկսեց իր պետական անկախ կեանքը:

---

*) Բ. Իշխանեան, «Բաքուի Մեծ Սարսափները», 1920թ. Թիֆլիս. էջ 184—185, 187: